

**Կորոնավիրուսի (COVID-19) ազդեցությունը
Գույքահարկի վրա
Յաճախ տրմոռ հառաեռ (ՅՏՅ)**

1. Կարո՞ղ եք երկարացնել 2020 թ. ապրիլի 10-ի վերջնաժամկետը:

Պատասխան. Ոչ: Նահանգային օրենսդրության համաձայն Վարչաշրջանը իրավունք չունի երկարացնել կամ հետաձգել գույքահարկի երկրորդ մասնավճարի վճարման վերջնաժամկետը՝ 2020 թ. ապրիլի 10-ը:

2. Վարչաշրջանի մասնաշենքերը ներկայումս փակ են քաղաքացիների այցելության համար, ինչպե՞ս կարող եմ վճարում կատարել:

Պատասխան. Չնայած, որ մենք ներկայումս գրասենյակներում կանխիկ վճարումներ չենք ընդունում, սակայն հարկատուները կարող են վճարել առցանց, հեռախոսով կամ փոստով: Էլեկտրոնային չեկերի առցանց վճարման համար գումար չի գանձվում: Առցանց վարկային/դեբետային քարտերով գործարքների համար քարտային վճարումներ մշակող ընկերությունը գանձում է 2,25% սպասարկման վճար: Խնդրում ենք այցելել <https://ttc.lacounty.gov/>՝ վճարման բոլոր եղանակների, ինչպես նաև մի շարք այլ առցանց ինքնասպասարկման տարբերակների մասին տեղեկատվություն ստանալու համար:

3. Ի՞նչ տեղի կունենա, եթե ես չկարողանամ մինչև 2020 թ. ապրիլի 10-ը ամբողջությամբ վճարել գույքահարկի գումարը՝ COVID-19-ով պայմանավորված իրավիճակի պատճառով:

Պատասխան. Բոլոր այն գույքատերերին, որոնք կարող են ժամանակին վճարել իրենց հարկերը, մենք խրախուսում ենք դա անել: Այս եկամուտն օգնում է ապահովել կառավարության բնականոն աշխատանքը և տրամադրել հանրության համար կարևոր կենսապահովման ծառայություններ, որոնք հատկապես կարևոր են ճգնաժամային իրավիճակներում: Սակայն եթե Դուք դա անելու հնարավորություն չունեք, մենք ընդունում ենք նաև մասնակի վճարումներ, որոնք թույլ են տալիս նվազեցնել տուգանքի գումարը:

4. Կարո՞ղ եմ արդյոք դիմել տուգանքի չեղարկման խնդրանքով այն դեպքում, եթե ինձ չհաջողվի ժամանակին կատարել վճարումներ COVID-19-ով պայմանավորված իրավիճակի պատճառով:

Պատասխան. Այո: Սակայն հարկատուները չեն կարող տուգանքի չեղարկման խնդրանքով դիմել նախօրոք: Գույքահարկի վճարման վերջնաժամկետի հաջորդ օրվանից՝ ապրիլի 11-ից սկսած հարկատուները, որոնք չենք կարողացել ժամանակին մուծել հարկերը COVID-19-ով պայմանավորված իրավիճակի պատճառով, կարող են մեր վեբ կայքի միջոցով ներկայացնել դիմում տուգանքի չեղարկման վերաբերյալ: Դեպարտամենտը ձևավորել է հատուկ թիմ, որը կդիտարկի այն անձանցից ստացված դիմումները, ովքեր կարող են ապացուցել, որ չեն կատարել վճարումները COVID-19-ով պայմանավորված իրավիճակի պատճառով:

5. Ինչպե՞ս կարող եմ իմանալ իմ Անհատական Նույնականացման Յամարը (Personal Identification Number, PIN)՝ առցանց վճարում

**Կորոնավիրուսի (COVID-19) ազդեցությունը
Գույքահարկի վրա
Յաճախ տրմոռ հառաեռ (ՅՏՅ)**

Կատարելու համար, եթե հաշիվ չունեմ:

Պատասխան. PIN-ը նշվում է գույքահարկի վճարման բոլոր հաշիվներում և ամեն տարի չի փոխվում: Եթե Դուք չեք ստացել այս տարվա գույքահարկի հաշիվը, ապա այդ տեղեկատվությունը կարող եք ստանալ նախորդ տարվա հաշվից: Խնդրում ենք հաշվի առնել նաև, որ PIN-ը անհրաժեշտ է միայն էլեկտրոնային չեկերի առցանց վճարման համար:

6. Վարչաշրջանը կարո՞ղ է հրաժարվել վարկային/դեբետային քարտերով առցանց կամ հեռախոսի միջոցով վճարումների համար գանձվող 2,25 տոկոս սպասարկման վճարից:

Պատասխան. Ոչ: Վարչաշրջանը չի կարող հրաժարվել վարկային/դեբետային քարտերով կատարվող գործարքների համար գանձվող 2,25 տոկոս սպասարկման վճարից: Այդ վճարը գանձվում է քարտային վճարումները մշակող ընկերության կողմից՝ գործարքի իրականացմանը նպաստելու նպատակով: Հիշեցնում ենք, որ էլ. չեկերի առցանց վճարման համար գումար չի գանձվում

7. Գույքահարկի վճարները կնվազեցվե՞ն COVID-19--ով պայմանավորված իրավիճակի տնտեսական ազդեցության հետևանքով:

Պատասխան. Ոչ: Գույքահարկի վճարների չափը սահմանվում է գույքի կալանադրման իրավունքի ամսաթվին՝ յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ին: 2019-2020 թթ. համար տարեկան գրավադրմամբ ապահովված գույքահարկի վճարման ենթակա ընթացիկ գումարները սահմանվել են 2019 թ. հունվարի 1-ին, ուստի ընթացիկ հաշիվները նվազեցման ենթակա չեն: Եթե ունեք արժեզրկման կամ ծառայողական նպատակներով օգտագործվող անձնական սեփականության գնահատման հետ կապված հարցեր, ապա դիմեք Գնահատողի գրասենյակ (213) 974-3211 հեռախոսահամարով կամ այցելեք <https://assessor.lacounty.gov/> վեբ կայքը:

8. Ես իմ գույքահարկի վճարն ուղարկել եմ փոստով, սակայն համակարգում իմ հարկերը նշված չեն որպես վճարված: Ի՞նչ պետք է անեմ:

Պատասխան. Փոստով ուղարկվող վճարների մշակման ժամկետները կարող են ձգձգվել հանրային առողջության համար առկա վտանգների պատճառով: Փոստով ուղարկված վճարները կաշիատենք մշակել հնարավորինս արագ: Եթե Ձեր վճարումը կմշակվի մինչև 2020 թ. ապրիլի 10-ը, ապա Դուք իրավունք կունենք պահանջել տուգանքի չեղարկում՝ վերը նշված կարգի համաձայն:

9. Եթե ես իմ գույքահարկի վճարման համար օգտվում եմ ԱՄՆ-ի փոստային ծառայության (USPS) կամ սուրհանդակային ծառայություններից (FedEx, UPS և այլն), սակայն Վարչաշրջանի գրասենյակները փակ են, ապա ինչպե՞ս դուք կստանաք իմ վճարումը:

Պատասխան. Այս պահի դրությամբ մենք ստանում ենք USPS-ի կամ սուրհանդակային ծառայությունների կողմից առաքվող փոստը: Եթե

**Կորոնավիրուսի (COVID-19) ազդեցությունը
Գույքահարկի վրա
Յաճախ տրմոռ հառաեռ (ՅՏՅ)**

հանգամանքները փոփոխվեն, մենք կկարողանանք չեղարկել տուգանքները այն վճարումների համար, որոնք այլ կերպ կառաքվեին ժամանակին: Փոստի միջոցով վճարումների մասին լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար սեղմեք այստեղ՝ <https://ttc.lacounty.gov/avoid-penalties-by-understanding-postmarks/>

10. Ես պետք է ստանամ փոխհատուցում գույքահարկի համար: Փոխհատուցման ստացումը կհետաձգվի՞ COVID-19-ով պայմանավորված իրավիճակի առնչությամբ:

Պատասխան. Նահանգային օրենսդրությունը պահանջում է, որ Յարկային տեսուչները տրամադրեն փոխհատուցումը սկզբնական վճարման ամսաթվից սկսած 60 օրվա ընթացքում: Սակայն ընթացիկ ճգնաժամային իրավիճակում կշված ժամկետները կարող են սովորականից երկար լինել:

Յիշեցնում ենք, որ մեր վեբ կայքի օգնությամբ Դուք կարող եք տեղեկանալ վճարման ենթակա հարկերի գումարների մասին, պահանջել հաշվի կրկնօրինակ և տեսնել վճարման պատմությունը: Վճարման բոլոր տարբերակների մասին լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք **ՍԵՂՄԵԼ ԱՅՍՏԵՂ** : Մենք ստեղծել ենք նաև **ԽՈՐՀՈՒՐԴ ՏՐՎՈՂ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴ ՉՏՐՎՈՂ 5 ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ** ցանկ, որը պարունակում է օգտակար տեղեկություններ գույքահարկի վճարման մասին, ներառյալ **Ինչպես խուսափել տուգանքներից** բաժինը:

Լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար կարող եք նաև մեզ զանգահարել 213-974-2111 հեռախոսահամարով կամ այցելել մեր վեբ կայքը՝ ttc.lacounty.gov: Խնդրում ենք հաշվի առնել, որ զանգերի թիվը կարող է մեծ լինել, և որ մեր վեբ կայքն ունի ինքնապասարկման ընտրանքներ:

COVID-19-ի մասին վերջին տեղեկությունները ստանալու համար այցելեք **Առողջապահության դեպարտամենտի** վեբ կայքը: Բացի այդ, Լոս Անջելեսի Վարչաշրջանի վեբ կայքում նույնպես առկա են COVID-19-ի վերաբերյալ տարբեր նյութեր՝ <https://lacounty.gov/covid19/>: